

չուրները արտասուօք կը լեցուէին : Ի՞նչ թենացիք խորին լուռութեան մէջ էին , ու վայրկեան վայրկենի վրայ սրտերնին կը դողար որ մահուան հրամանը պիտի որոտայ ականջնին : Ի՞նչ Գլեմետրիոս դարձաւ ըսաւ իրենց . “ Կ’ուզեմ ցուցը նել ձեզի թէ որչափ յանցաւոր էք ինծի . ձեր թշնամին չէր անիկայ՝ որուն անու զորմ գտնուեցաք . դուք անոր անիրաւեցաք՝ որ զձեզ կը սիրէր , անոր՝ որ հիմա ալ զձեզ կը սիրէ , և ձեզմէ վրէժ խնդրելու համար՝ ահաւասիկ կը ներէ ձեզի ու բարերարութեամբ կը լեցնէ : Դարձէք ամենքնիդ ալ ձեր բնակարանը . այն միջոցին որ դուք հոս էիք , իմ զինուորներս ցորեն ու հաց կը եցին ձեր տունները ” :

Տ Ն Տ Ե Ս Ս Կ Ա Ն Ք

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Գ . Կարևարանին հարկաւոր ամաններն ու գործիքները :

Կաթնարանին ամաններն ու գործիքները ամէն տեղ միակերպ չեն . մենք հոս տեղս յիշենք աւելի պէտք եղած ու դիւրագործածելիները :

Ա . Կաթն ֆէլու աճան կամ Դոյլ : Ես ամանին սովորական ձևը պատկերեցին մէջ կը տեսնուի (Ձև Ա) . որուն բարձրութիւնն է 30 հարիւրորդամեզը . և



Ձև Ա շրջապատ տախտակներէն մէկը մէկալներէն աւելի երկայն թողուցած է՝ 24 հարգմ . անկից բռնելու համար . տակին տրամագիծն է 15 հարգմ . և բերնին տրամագիծը 26 հարգմ .

Բ . Տաշ : Կաթի տաշտին տակի կողմը աւելի լայն կ’ըլլայ քան զբերանը . ասոր երկու կողմէն մէյմէկ շերտ տախտակներ աւելի երկայն թողուցած կ’ըլլայ և ծայրերնին ծակած , որոնցմէ կ’ըլլայ կ’անցընեն տաշտը վերցընելու հա-

մար : Իսկայ կը գործածուի կաթը տեղէ տեղ փոխադրելու համար . (Ձև Բ) : Եւ որպէս զի կաթը տանելու ատեն ցընցուելով չթափուի , կաթին երեսին վրայ կը դնեն մէկ կտոր թեթեւ տախտակ մը , որ տաշտին բերնէն քիչ մը պզտիկ կ’ըլլայ :

Ձև Բ



Գ . Պարկուտ , որ է քամոց կաթը անցընելու համար : Իսկայ կրնայ ըլլալ հասարակ մաղ մը խիտ հիւսուած մաղէ կամ արծաթի թելէ : Ուղեցրիի մէջ կը շինեն ձագա-

Ձև Գ



ռի՝ ձևով թանազէ՝ կամ փայտէ (Ձև Գ) , և ծայրի ծակին մէջ կը թխմեն չորցած լուացած տեսակ մը խոտ , որն որ կաթի ամանին բերանը կը զետեղեն ճանկաձև փայտի մը վրայ :

Դ . Կաթն պահելու աճան : Փորձուած է որ սերը աւելի դիւրաւ և շուտ ու աւելի առատ կը ժողվուի կաթին երեսը , երբոր կաթին ամանին բերանը լայն և տակը նեղ ըլլայ , և կամ տափակ ձևով քիչ խորութիւն ունենայ : Եւ մենէն յարմարն է հողէ ամանը , որուն բերնին տրամագիծը 40 հարգմ . ըլլայ ու տակինը 16 հարգմ . և կաթը վազցընելու համար բերնին մէկ կողմը դէպ ’ի դուրս քիթ ձևացուցած , և կամ վարերը մէկ կողմը ծակ մը բացած : Կ’ըլլայ աղէկ նաև շրջանակներով փայտի շերտերէ , ինչպէս որ տակաւը կը շինեն . որուն բարձրութիւնը 8 հարգմ . ըլլայ և տրամագիծը 60էն ինչուան 90 հարգմ . և վարերը մէկ կողմէն ծակած , ուսկից կաթը վազցընելով՝ սերը կը ցամքեցընեն : Սովորաբար ամառը աւելի բարակ կը լեցընեն կաթը և ձմեռը աւելի թանձր .

որովհետեւ ամառը թէ որ կաթը շատ լեցուցած ըլլայ, քիչ ժամանակի մէջ թանձրանալ սկսելով՝ սերը կաթէն աղէկ մը բաժնուելու ատեն չունենար:

Ե. Սերը դադարէ՞ Գործիք, կամ Սերտ: Երկայ կրնայ շինուիլ թանադէ, ասօսախէ և ուրիշ կարծր փայտէ, բայց ամենէն աղէկն է փղոսկրէն. ձեւը շերտփի կամ մեծ դրգալի կը նմանի, բերանը սուր՝ որ կարենայ կաթը սերէն բաժնել: Կայ մէկ ուրիշ գործիք մըն ալ սերին երեսը խառնելու ստէպ՝ թող չտալով որ երեսը դեղին մաշկ մը կապէ. այս գործիքն է փայտէ դանակ մը երկայն 40 հարգմ.: Ար գործածուի նաեւ պզտի դանակ մըն ալ փղոսկրէ կամ ոսկրէ խիստ բարակ՝ ամանին եզերքէն սերը բաժնելու համար, որովհետեւ սերը եզերքին կը կպչի:

Զ. Սերը պահելու աճան: Սերը լաւ կ'ըլլայ պահել կուժի կամ ստոմանի մէջ, այսինքն բերանը նեղ խորունկ ամանի մէջ. որուն բերանն ալ աղէկ գոց պէտք է պահել:

Երեսմէ զատ կաթնարանը պէտք է ունենայ մաքրելու, լուարու համար գործիքներ. որովհետեւ կաթնարանին մաքրութեանը վրայ մեծ հոգ պէտք է ունենալ, և կաթին ամանները, գործիքները խիստ մաքուր պէտք է որ ըլլան:


Կարուութեան պատճառաւ ամանները պէտք է որ աղէկ շինուած ըլլան, ամենեւին պզտի ծակեր և խողովներ ալ չունենան, որոնք չեն մաքրուիր ու կաթին գէշնալուն պատճառ կ'ըլլան: (Դ) Ե որ ըստ զիպաց փայտէ ամանի մը մէջ երկար ատեն կաթ մնացած ու թթուած ըլլայ, այն ամանը մաքրելու համար պէտք է եռացած մոխրաջուր լեցընել ու տասը կամ տասուերկու ժամ այնպէս թողուլ. ետքը պէտք է շփել աղէկ մը վրձնաւելով. և մոխրաջուրը պարպելէն ետքը, քանի մը անգամ մէջը եռացեալ ջուր լեցընելով՝ նոյնպէս պէտք է շփել. նոյն գործողութիւնը պէտք է ընել նաեւ պաղ ջրով. և ետքը պարպել ու թողուլ 24 ժամ որ աղէկ մը չորնայ:

(Ե) անագէ կամ անագոտած երկրթէ

ամաններն ալ լաւ կը ծառայեն կաթնարանի, որոնք զով ու աղէկ կը պահեն զկաթը. բայց այս տեսակ ամանի մէջ պէտք չէ թողուլ կաթը որ թթուի: Այս պէտք է ուշ դնել ալ՝ որ երբ անագը կը պակսի, նորէն անագել տրուի, կամ ալ չգործածուի: Այս ամանները պէտք է բոլորչի կիսագնտաձեւ ընել. վասն զի փորձուած է որ այս տեսակ ամաններուն անկիւններուն անագները շուտ կը մաշին ու կը սկսին ժանգոտիլ, որ կաթին խիստ փասակար է:

Կաթնարանի մը մէջ հարկաւոր է ունենալ ջերմաչափ մը՝ օգին ջերմութիւնը հաւասարաչափ պահելու համար: Կարձեալ կաթնաչափ մը՝ ունեցած կաթին աղէկութեան չափը իմանալու համար, և ամէն մէկ կենդանւոյն ինչ տեսակ կաթ տուած ըլլալին ճանշնալու համար տարւոյն ամէն մէկ եղանակին մէջ և կամ իրենց հիւանդ կամ առողջ եղած ատեննին, և աղէկ կամ գէշ խնամք ունենալու ատեննին, և կամ իրենց այլ և այլ տեսակ կերած սնունդներնուն համեմատ. կամ դարձեալ՝ գնած կաթին որչափ սեր տալը գիտնալու համար, որով ճանշնալով կաթին աղէկ կամ ջրոտ ըլլալը՝ ըստ այնմ գին հատուցուի. դարձեալ իմանալու համար թէ ինչ եզանակաւ որ շատ քանակաւ կաթին սերը կ'առնուի, կաթնաչափին ցուցուցածին համեմատ է:

Կաթնաչափը (Ձև Դ), որ է գիւտ Պենքս անգղիացւոյն, ապակիէ խողովակ մըն է, որուն բարձրութիւնը 16 հարգմ. է, և 4 հարգմ. տրամագիծը մէջի կողմէն, այսինքն ապակւոյն հաստութիւնը չսեպելով. ասոր տակը գոց կ'ըլլայ, վրան բաց. 40 տրամէն աւելի մէջը կաթ կ'առնէ. տակէն սկսեալ 10 տրամ կաթը ինչուան ուր որ կը հաս.



նի՝ հոն խողովակը վրայէն կոր գծած է ապակի կտրելու գործիքով . նոյնպէս ան կից վեր տասնական տրամ կաթ առնելու չափով, բոլորը չորս գիծ գծած է՝ քառսուն տրամ կաթին համար . և այս չորս գծերուն միջոցներն ալ 25 ական հաւասար բաժանմունք ունին, որ բոլորը մէկէն հարիւր կ'ըլլայ . այս համեմատութեամբ բերնի կողմի գծէն սկսեալ՝ ինչուան քսանըհինգ բաժանմունք նշանած է : Աստի երբոր կաթին թանձրութիւնը կ'ուզես իմանալ, կը լեցընես կաթը այս խողովակին մէջ ինչուան վերի գիծը, ու այնպէս կը թողուս 24 ժամի չափ . կաթին սերը կամաց կամաց կը զտուի երեսը կ'ելլէ . և երբոր թանձրացած ու բոլորովին կաթէն զատուած կ'երևայ, կը դիտես թէ սերին թանձրութիւնը քանի աստիճան բաժանմունքի տեղ բռներ է . և այս թանձրութեան աւելի կամ պակաս ըլլալը կաթին աղէկութիւնը կամ ջրոտ ըլլալը կը ցուցնէ : Օ որ օրինակ թէ որ սերին հաստութիւնը 14 աստիճանի բաժանմունքի տեղ բռնած է, ըսել է թէ հարիւր մաս կաթը տասնըչորս մաս սեր կու տայ . ասկից կը յայտնուի կաթին արժէքը : Այս այս համեմատութենէն կը ճանչցուի կաթի մը սովորական կաթէն որչափ աւելի ջրոտ ըլլալը . թէ որ կէսը ջուր խառնած է, սերին հաստութիւնն ալ սովորականին կէսը կ'ըլլայ, այսինքն եօթն աստիճան . կամ թէ որ չորրորդ մասը խառնած է, կամ թէ բնական այնչափ ջրոտ կաթ է, սերին աստիճանն ալ չորսին իրեքը կ'ըլլայ, որ է տասնուկէս աստիճան . և այլն :

(Դ) Է որ ուզէ մէկը՝ կրնայ աւելի քիչ ժամանակի մէջ սոյն փորձն ընել, այս խողովակը դնելով 30-36 աստիճանի տաքցուցած ջրոյ մէջ . բայց ալ լաւ է թողուլ որ ինքիրեն բնական տաքութեամբ զտուի :

Այս ալ պէտք է գիտնալ՝ որ սերին շատութենէն կարագին շատութիւնը չգիտցուիր . վասն զի ամէն սեր հաւասար չափով կարագ չտար :

Վան ուրիշ տեսակ հեղուկաչափներ

և կաթնաչափներ, որոնք կաթին տեսակարար ծանրութիւնը կը յայտնեն . բայց անոնցմով կաթին աղէկութիւնը չիմացուիր, որովհետեւ կաթին շատ սեր ունենալը՝ իր թեթեւութենէն, ծանրութենէն չկախուիր . անոր համար անոնցմով կաթը քննողը շատ անգամ կը սխալի ու ջրոտ կաթը աղէկ կաթի տեղ կ'ընդունի :

ՉԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԱՓԱԿՈՍՈՒԹԻՒՆ

Տասնորդական դրոշմին չափոց ու կշռոց :
(Տես երես 123)

2. Առաջին արժէքը : — Արժէքի չափը կ'ըսուին դրամական միութիւնները, և չափուց ու կշռոց նոր դրութեան մէջ ասոնց հիմնական միութիւնը Քրանգ կ'ըսուի . և է 5 կրամ արծաթոյ, որուն մէկ տասնորդը խառնուրդ է և ինը տասնորդը զուտ արծաթ :

Արժէքի չափերն ալ իրենց բաժանմամբը, յարգովը, ծանրութեամբն ու տրամագծովը չափուց ու կշռոց նոր դրութեան տակ ձգուեցան :

Առաջին : — Տասնորդական թըւարկութեան մէջ միութենէն 10 և 100 թուոց կ'անցնինք . զորոնք բաժնելով ընդ 2 և ընդ 5, որ են միակ բաժանարարք 10 և 100 թուոց միանգամայն, կը գտնենք 5 և 2 Ֆրանգնոց, ու 50 և 20 Ֆրանգնոց : Այց միութենէն վար իջնելով՝ կ'անցնինք Ֆրանգին ասոնորդին և հարիւրորդին, զորոնք բաժնելով ընդ 2 և ընդ 5, կը գտնենք 50 և 20 հարիւրորդք, ու 5 և 2 հարիւրորդք : Արեւմտեան Ֆրանգին տասնորդական բաժանումը կը բովանդակէ այնպիսի դրամներ, որ են 1, 2, 5, 10, 20, 50 հարիւրորդք : Անոնցմէ ետեւ Ֆրանգը և իր տասնորդական բազմապատիկները կու գան, որ են 2, 5, 10, 20 Ֆրանգնոց : Ինչուան 50 Ֆրանգնոց առաջ չերթցուիր, և 40 Ֆրանգնոցն որ տաս-